ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
2019Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2019 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի կողմից իրականացվել են հետևողական աշխատանքներ թանգարանային գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի 09.04.2019թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ոստիկանության պատմության թանգարանային ֆոնդերը գույքագրելու մասին» թիվ 182-Ա հրամանի համաձայն գույքագրվել է 3277 թանգարանային առարկա:

Կրթահամալիրի պետի 22.02.2019թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի պաշտոնական կայքէջում տեղեկությունների լուսաբանման գործընթացը կազմակերպելու մասին» թիվ 93-Ա հրամանի համաձայն ՀՀ ոստիկանության կայքէջի կրթահամալիր բաժնում տեղադրվել է «Ոստիկանության պատմության թանգարան» բաժինը:

Ոստիկանության օրվա կապակցությամբ թվով 100 թանգարանային առարկա փոխադրվել է ՀՀ ոստիկանության վարչական շենք և կազմակերպվել թանգարանային անկյուն: Նշված թանգարանային առարկաների հիմքի վրա թանգարանի առաջատար մասնագետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Դ.Հովսեփյանը լուսաբանել է ոստիկանության անցած ուղին ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանին և ՀՀ ոստիկանապետ Վ.Օսիպյանին:

Թանգարան այցելությունների ընթացքում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Դ.Հովսեփյանը ցուցադրել է Կրթահամալիրի տարածքում տեղակայված Սովետական միության հերոսների հուշապատը, Արցախյան հերոսամարտում և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված ոստիկանների, ցեղասպանության 100-ամյակին նվիրված հուշակոթողները, ՆԳ նախարարների, ոստիկանության պետերի յուղանկարները, իսկ թանգարանում մանրակրկիտ բացատրել ոստիկանության անցած ուղին՝ օգտագործելով տեխնիկական հնարավորությունները:

Կրթահամալիրի ակադեմիայի 1-ին կուրսի 1-ին և 2-րդ դասակների, ինչպես նաև 1-ին կուրսի 1-ին և 2-րդ խմբի վճարովի սովորողների հետ «ՀՀ ոստիկանության պատմություն» առարկայից թանգարանում դաս է անցկացրել կրթահամալիրում

պայմանագրային կարգով դասավանդող, պատմական գիտությունների դոկտոր Ռ.Սահակյանը:

Համալրվել են նաև թանգարանային ֆոնդերը: ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունից թանգարանին է հանձնվել համեմատական մանրադիտակ, սուբյեկտիվ պատկերի կազմման, դատաձգաբանական հետազոտություններ կատարելու սարքեր, որոնք ցուցադրվում են: Հաշվառվել է ևս շուրջ 2000 թանգարանային առարկա, որոնք պետք է գույքագրվեն:

Հաշվետու ժամանակաշրջանում օգտագործվել է նաև Կրթահամալիրի ռադիոցանցի և «Պատիվ ունեմ» պաշտոնաթերթի հնարավորությունները: Կրթահամալիրի ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Դ.Հովսեփյանը ռադիոցանցով ելույթ է ունեցել «ՆԳՄ մասնակցությունը Երևանի մետրոյի շինարարությանը» թեմայով:

«Պատիվ ունեմ» պաշտոնաթերթում հրապարակել է «Տաթևի պարծանքը», «ՀՀ ոստիկանության պատմության թանգարանը 42 տարեկան է» հոդվածները, օգտագործելով թանգարանային ֆոնդերի հնարավորությունը: Ընդվորում «Պատիվ ունեմ» պաշտոնաթերթի 5-րդ համարի 10 օրինակ ուղարկվել է Սյունիքի մարզի Տաթևի միջնակարգ դպրոց:

ՀՀ հանրային ռադիոյի «Ժամանակի վկա» հաղորդաշարով տրվել է «ՀՀ ոստիկանության պատմության թանգարանը 42 տարեկան է» թեմայով հաղորդում: Կրթահամալիրի կայքում հրապարակվել է «ՀՀ ոստիկանության պատմության թանգարանը 42 տարեկան է» հոդված:

Ոստիկանության պատմության թանգարանի 42 ամյակի կապակցությամբ 2019թ. նոյեմբերի 11-ին թանգարանում կայացել է միջոցառում, որին մասնակցել են Կրթահամալիրի ղեկավարությունը, ոստիկանության վետերաններ և սովորողներ:

Շարունակվել է նաև թանգարանի գործունեության իրավական ապահովումը: ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 13.09.2019թ. թվ 8 նիստում ընդունվել է «ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի գործունեության կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ» որոշում:

Նշված ժամանակաշրջանում թանգարան են հաճախել շուրջ 720 հյուրեր, դպրոցականներ, Կրթահամալիրի սովորողներ և քաղաքացիներ:

ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի
առաջատար մասնագետ, ոստիկանության
պաշտոնաթող գնդապետ **Դ.Հովսեփյան**